

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՌԱԿՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ Գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը, **նախագծա-նախահաշվային փաստաթղթեր պատրաստելու** նպատակով կազմակերպվելիք մրցույթների հնարավոր մասնակիցների որոշման նպատակով հայտարարում է նախարարական վերջնական ընթացակարգ:

Հետաքրքրված համապատասխանող Հայտատուները Հայտերը պետք է ներկայացնեն ստորև նշված հասցեով մինչև 2017թ. հուլիսի 4-ը ներառյալ: Հայտերը կարող են ներկայացվել էլեկտրոնային տարբերակով՝ [info@arspiu.com](mailto:info@arspiu.com) էլեկտրոնային հասցեով:

### ՆԱԽԱՌԱԿՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Նախարարական վերջնական ընթացակարգին մասնակցելու ցանկություն ունեցող մասնակիցը պետք է բավարարի ստորև բերված որակավորման չափանիշներին՝

Ունենա ՀՀ Քաղաքաշինության նախարարության կողմից հաստատված համապատասխան անհրաժեշտ լիցենզիաները, այդ թվում հիդրոտեխնիկական բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի մշակման և փորձաքննության:

- Ունենա առնվազն 5 տարվա փորձ նախագծա-նախահաշվային ծառայությունների կատարման (այդ թվում հիդրոտեխնիկական բնույթի փաստաթղթերի մշակման և փորձաքննության ոլորտում) /ներկայացնել իրականացրած պայմանագրերն ըստ տարիների՝ նշելով աշխատանքների նկարագրությունը, ծավալը և Պատվիրատուին, ինչպես նաև կատարված տարածաշրջանը/:

- Ունենա որակավորված և փորձառու անձնակազմ, որոնք են ծրագրի ղեկավար, գլխավոր ինժեներ, մասնագետներ /ներկայացնել կենսագրական թերթիկներ/:

- Ունենա աշխատանքների կատարման համար անհրաժեշտ հիմնական սարքավորումները /ներկայացնել ցանկ/:

Վերոշարադրյալի շրջանակում ներկայացվող հասցեն, որին հղում է կատարվում, հետևյալն է.

Տնօրենի տեղակալ  
պրն. Արմեն Վանյան

ՀՀ Գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» / ԳԾԻԳ ՊՀ /

Հայաստանի Հանրապետություն,  
Երևան 0014, Կոմիտասի փող. 54 Բ, 3-րդ հարկ;  
Հեռ. 29 73 01, 29 73 02; ֆաքս 29 73 08;  
Էլ-փոստ. [info@arspiu.com](mailto:info@arspiu.com)